

վրայ նայող երեք տունները, մթերանոցները և պարտեզը, Կիրկէի Թահթա Մէրքէզին Պէկակ գիւղին մէջ 1528 քառակուսի կանգուն գետինը: Ասոնց վաճառման արդիւնքին վրայ բարդելով զանազան շարժուն գոյքերու արժէքը, և բոլոր անշարժ ստացուածքներու իր մահուան սարիին վարձքերը, յետոյ այս ընդհանուր գումարէն զեղչելով զանազան նուիրատուութիւններ և վճարումներ, մնացեալ գումարը կ'սահմանուի Գահիրէի թողերէն մէկուն մէջ, զոր Առաջնորդարանի ժողովը պիտի որոշէ, զնել գետին մը և վրան կառուցանել Հայ Եկեղեցի մը, Ս. Գրիգոր Լուսաւորչի անուան նուիրուած:

Երբ կ'զբէր այս կտակը, Եղիայեան 73 տարեկան էր արդէն, ծերունի և հիւանդ. 1911-ին Եւրոպա կ'մեկնի օդափոխութեան և դարմանի նպատակաւ, բայց հազիւ ժամանած Թրիեստ, կ'վախճանի հոն, Յունիս 21-ին: Մարմինը Յուլիս 3-ին կ'փոխադրուի Գահիրէ, և, երկու օր ետքը, Ազգային Բարերարի արժանախօյնել հանդիսաւորութեամբ կատարուելով յուզարկաւորութիւնը, կ'թաղուի Մարմինայի Ազգային Գերեզմանատան մէջ, մատուելն հիւսիսային արեւմտեան անկիւնին մօտիկ, ընտանեկան յատուկ դամբարանին մէջ, ուր թողուած էին իր վաղամեռիկ դստրիկը և կիներ:

Տարւոյն մէջ հինգ անգամ, ամէն մեակոցի օր, Ազգային Բարերարներու շարքին, Եկեղեցականաց թափորով և ժողովրդեան մտանակցութեամբ, կ'օրհնուի իր հողակոյտը և երախտագիտութեամբ կ'մեծարուի իր յիշատակը:

ՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՔ

Ըստ կտակին տրամադրութեան, թէեւ Բարերարին մահէն մինչեւ մէկ տարի վերջը, պիտի սկսուէր զորձադրութիւնը և պիտի գնուէր եկեղեցւոյ յատկացուելիք գետինը, բայց կտակին վաւերացումը Ռուսական Հիւպատոսարանի դատարանէն հազիւ եօթն ամիս վերջ կատարուած, կտակարարին Ազգային պաշտօնով Եգիպտոսէն բացակայած, տուներուն վաճառման համար կտակադրին տրամադրած Գահիրէի Խառն դատարանին առջեւ կատարելի ձեւակերպութիւնները շատ ժամանակի կարօտած և Եգիպտոսի անտեսական տազնապին հետեւանքով տուները լաւ պայմաններու մէջ վաճառուել